## 14. ՀՈՐՆ ՈՒ ՄՈՐԸ ԾԱԽՈՂ ՏՂԱՆ

*Մին թաքավըրու խոխա չի ինում։ Տրա հետե յել շատ ար դարդ անում։ Մին օր էլ էրկան դարդ ընելան հետը դիլխոր տուն ա կյամ իրան բաղը, վըեր մըխըրե շոռ կյա, եշում ա, տըեսնում մին օց իրան ճուտերը կլխեն հըվաքած, լոխճինին մին-մին լուզ ա տամ։ Թաքավըերը իրեսը բիդի երգյինքն ա անում, թա՝ ա՛յ աստված, պա ինձ լինհա մին օցու մշանք էլ չը՞ս բախտ տուվալ, սա իրան ճուտերավն ուրխանում ա, ես մինն էլ չօնեմ, վըեր իրեսեն եշիմ։ էտ վախտը երգյինքյան մին էրկան, սիպտակ մըրքավուր մարթ ա վըեր կյամ, թաքավըերեն ասում.—Աստված ամըրտ ըսկացալ ա, քեզ մին տղա խոխա յա տըլական. տա առաջ քու ամմըեն հինչըտ ա ծխըլական օտե, ետնան էլ քեզ ու կնգանըտ։ Թաքավըերը թա՝ վըեչինչ, թող տի ինի, մենակ թաքյի վըեր ասեն էտհինչ թաքավըերեն տղա օնե։*

*Իննը ամըեսն իննը օրը վըէր անց ա կենում, թաքավըերեն կնգյը մին տղա յա պիրում։ էտ տղան էնքան ճէլլի յա մըծանում, վըեր ուրեկանը տրեկան ա տըեռնում։ Մին քանի տարե անց ա կենում, տղան վըեր տըեռնում ա տասսը-տըսներկու տըրեկան, ըսկսում ա կարտ խաղ անելը, տանը իլըծ-չիլածը տանել տալն ու ծախելը։ Մին օր էլ քյինամ ա բազար, տըեսնում լավ զենքեր ըն ծախում։ Ծըեռքեն մին կապեկ էլլա փող չի ինում*

մնացած։ Ծխողին հրցընում ա, թա վըեր իմ հոր ուխմար քե տամ, զենքերն ինձ կըտա՞ս։ Ծախողը թա՝ հա՛։

Տղան քյինում ա տոն, ծիրան հորն ու մորը պիրում բաղար, տամ էտ ծախս ընողին, զենքերն ինքյ օնում։ Տրանա ետը շատ տըեղեր ա շռռ կյամ, շատ պենէր ա տըեսնում, էտ զենքերավը շատ օյիննե յա խաղում, տրա հետե յել մին թաքավրեր օղում ա էտ տղեն կլյխն օտե։ Էտ տղան գործավ պիտի քյինար մին օրիշ թաքավրերու կոշտ, իսկ էն մին թաքավրերն էլ էտ թաքավրերէն նհետ շատ լա՛վ ա ինում, նամակ ա կյիրում, տամ էտ տղեն, թա կտաս էտ թաքավրերեն։ Նըմակումը կյիրած ա ինում, թա էտ տղայն տըեղ հըսնելն ու բա՛ս կլ՞խը կըկտրես, պահես ինձ տաս։ Տղան ծիյավ վըեր շատ կյամ ա, նղանում ա։ Մին ըխպրու ղրաղն վըեր ա կյամ, վըեր դինջանա։ Մտածում ա, ասում ա՝ իմ հոր էսքան ծախս ա ըրալ, ինձ կըրթըցրալ, պա լի՞ն էս նամակը պեց չածե՞մ, տըեսնամ հինչ ա կյիրած։ Պեց ա անում կարթում, տըեսնում կյիրած, վըեր տղան ըտըեղ հսնելն ու բա՛ս կլ՞խը կըկըտրես, պահէս ինձ տաս։ Տղան նամակը կլոլում ա, ըստաքան շինում, իրեք հետ ըխպիրան ճոր նի օնում՝ խմում, նամակն էլ ճըղում, տեն քցում, մին օրիշ նամակ կյիրում, տանում տամ էն թաքավրերեն։ Տեղատ ետ ա տըեհնում կյամ, հսնում մին քաղաք, մին պըռավու տան վըեր կյամ, էտ պառավեն հրցընում, թա քղաքումը հինչ կա՞, հինչ չի՞ կա։ Էտ պառավը թա քըղաքեն թաքավրերեն ըխճըկանը ուզուղնե շատ ըն կյամ, լոխճինին հարցեր ա տամ, կարում չըն ջողոբը տան։ Նա յել ասում ա.—Հու վըեր իմ հըրցերեն կարե դուզ պատասխանը տա, ես նրա յըմ քյիննական, էտ տղան էլ ա քյինամ ըխճըկանը կոշտը, տռված հըրցերեն լոխճինին պատասխանում։ Վըեր տա պըծընում ա, տղան էլ ըխճըկանն ա հարց տամ՝ ասում ա.—էն հու վա՞ր, վըեր տան-տըեղ լոխ կերավ, քուըփուչ ըրավ, վերչումն էլ հորն ու մորը զենքավ ծախեց, կյինը իրեք կում ճոր ըրավ, խմեց։ Էտ հարցեն ախճիգյը կարում չի պատասխանե. ասում ա.—Մին օր ժամանակ տո, մըտածեմ, պատասխանեմ։ Տղան թա՝ լա՛վ։ Թաքավրերեն ախճիգյն ծիրան էրկու հնգեր ըխճըկան յօր ա օնում, քյինամ էտ տղէն կոշտը, օտում ըն-խմում, տահանք տղէն լա՛վ հիրփըցընում ըն, ախճիգյը քյինամ ա տղեն օթաղը, խռըրցընում, հարցեն պատասխանը գյո՛նդո՛մ, լեչա՛կը մննան քցում, թողում տղեն քշտին, քյինամ։

Ախճիգյն էքյսի օրը տղեն հարցեն պատասխանը տամ ա։ Տղան մին օրիշ հարց ա տամ՝ ասում ա էն հի՞նչ ղուշ ար, վըեր

Թռչից-թլինաց ծառէն յիրա վըեր եկավ, բարը կերավ, Թեփուրը Թողեց ծառեն յիրա̃, թլինաց։ Ախճիգյն էլլա չի կարում պատասխանը տա, տղան ասում ա.—էտ էն ղուշն ա, վըեր Թըեփուրը մեհենգյ իմ ծըեռքեն ա։ Համ ասում ա, համ լեչակը ջուրան տօնա օնում, կըլխըլեր Թող անում։ Ախճիգյը ծեն ա տամ, Թա՝ հայրի՛կ, հայրի՛կ, սա յա իմ փըսացուն։

Թաքավըերը պիրո̈մ ա օխտը օր, օխտը քշեր հըսանեքյ անում, տահանց փըսակում, Թաքավըրոթունը տամ էտ տղեն, ըսկըսում ըն տըեղ առոք-փառոք ապրելը։

